

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՈՒԿԱՅԻՆ ԹԻՒՆ

Իրական պրոլետարիատ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ ընտանիք և դպրոց. Նամակ Արաւելի. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲՍՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաւառական նամակներ.

ԻԳԱՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ

II

Քանի որ մեր դպրոցները սխալ և անհիմն ուղղութեան շնորհով կազմվել է արդէն մեզանում իրական պրոլետարիատ, այսինքն կանանց այնպիսի մի դասակարգ, որ ոչ որոշ դեպքումը ունի, ոչ էլ որ և է ասպրոտաւոր աղբիւր, ոչ էլ վերջապէս, ընդունակ է որ և է աշխատանքով իր համար հաց ծարեւու,—մեզ մնում է այժմ մտածել նախ ինչպէս անել որ գոնէ ապագայում առաջն առնվի այդ տեսակ պրոլետարիատի կազմվելուն մեր հայոց իրական դպրոցները ուսում աւարտածների կօնքին գէնտից, ուրեմն ինչ գործնական ուղղութիւն պէտք է արվի մեր իրական դպրոցներին, որպէս զի այդ դպրոցներում աւարտած օրիորդները դուրս գալով դպրոցների պատերից՝ գինված լինելն կեանքի կուր համար, ձեռք բերած լինելով հաց տուող գործնական փեշակ:

Երկրորդ՝ մեզ մնում է մտածել թէ ինչ պէտք է անենք այն բազմաթիւ օրիորդներին հետ, որոնք արդէն աւարտել են իրանց ուսումը մեր դպրոցներում: Երեւոյ ոչինչ գործնական, հաց տուող ուսում չեն ստացել և կրթութիւն ստանալուց յետոյ մնացել են կեանքի մէջ տարալուծված, մոլորված, յուսահատ, անօգնական, գուցէ անիծելով այն ուսումը որ ստացել են և որ խել է նրանց իրանց ստոր շրջանից, ներշնչելով նրանց մէջ աւելի լայն պահանջներ, առանց միջոց տալու նրանց այդ իրանց մէջ ծնեցրած պահանջներին բաւականացնելու: Մեզ մնում է մտածել թէ ինչ կենսական ճանապարհ պէտք է բաց անենք մեր մէջ այդ արդէն գոյութիւն ունեցող իրական պրոլետարիատին համար, որ ծնեցրել են մեր մէջ մեր իրական դպրոցները իրանց սխալ և մեր կեանքի պահանջներին անյարմար ուղղութեամբ և պրօգրամով: Քննենք առաջին խնդիրը: Մենք ասեցինք որ մեր իրական դպրոցները աշակերտութիւնների մեծ մասը պատկանում է մեր հասարակութեան համար կրթված աղա-

րակութեան ստորին դասակարգին: Այդ տեսակ դասակարգին պատկանող աղջիկներ մեր դպրոցներում ուսում աւարտելուց յետոյ՝ մոլորված են մնում: Նրանք մեր դպրոցներին շնորհով իր թէ կրթված օրիորդները դառնալով, այլ ևս չեն կարող իրանց աղքատ, ստորին դասակարգին պատկանող ծնողներին նրանց տնային աշխատանքների մէջ օգնելու, այդ աշխատանքներին մասնակցելու: Մայրը կար կարելով, կամ լուսնացելով է ապրում, ինքն կերակուր է եփում և այլն,—աղջիկը չէ կարող մասնակցել այդ տնային աշխատանքներին, նա չէ գիտէ ոչ կարել, ոչ ձեւել, ոչ եփել, ոչ լուսնալ և այլն: Նա օրիորդ է: Նրա օրիորդ դառնալը այն աստիճան արմատանում է բոլոր իրան շրջապատողների համոզմունքի մէջ, որ մեզ շատ անգամ պատահել է լսել, ինչպէս մեր իրական դպրոցում աւարտած աղջկայ հայրը ու մայրը իրանց գաւակին այլ ևս ոչ թէ նրա անունով են կանչում, այլ ուղղակի «օրիորդ» են անուանում: Ապրողիւն, անպէտք ուսում ստանալով, այդ տեսակ օրիորդ համ ինքն կեանքի մէջ մոլորված է մնում համ էլ մի աւելորդ, ծանր բեռ է դառնում իր աղքատ ծնողների համար:

Պարզ է որ մեր իրական դպրոցը այդ տեսակ անձոնքի հետեւանքներին չէր հասնի, ինչ որ պրօգրամային մէջ որոշած լինէր՝ կամ մի հաստատ, հաց տուող արհեստ սովորեցնել իր անուհիներին, որը ձեռք բերած լինելով, ուսում աւարտած օրիորդը կը կարողանար իր անձնական աշխատանքով ապրել, կամ նոյն իսկ դպրոցում ընտելացնել ուսում առնող աղջիկներին տան անտեսութեան ամեն տեսակ ծիւղերին: Գերմանիայում և Եվրոպայում մեզ յայտնի են գեղեցիկ կերպով կազմակերպված դպրոցներ, որոնք աղջիկները սովորում են ոչ թէ միայն այլ և այլ ձեռագործներ, սովորում են կարել, ձեւել, գործել և այլն, բայց կանոնաւոր կերպով սովորում են լուսնացել, ուղեւորել, կերակուր եփել, ստանալ և մանուկներին խնամելու մասին տարրական հասկացողութիւն: Այդ բոլոր կենսական անհրաժեշտ հմտութիւնները համ պէտք են գալիս օրիորդներին իրանց տան անտեսութեան մէջ, համ էլ կեանքի մէջ ճանապարհ են բաց անում այս կամ այն միջոցով հաց վաստակելու:

Այդ տեսակ դպրոցներ պատրաստում են հասարակութեան համար կրթված աղա-

խիներ, դայակներ, բօնաններ, խոհարարուհիներ, կարանդներ, դերձակներ, և այլ արհեստաւոր—կանայք:

Կան այժմ ամբողջ Եւրոպայում և իրական բուն արհեստաւորաց դպրոցներ: Այդ տեսակ դպրոցը բազմաթիւ բաժանմունքներ ունի. այդտեղ օրիորդները սովորում են գրաւագործութիւն, հաշուագործութիւն, կազմարարութիւն, փայտի վրա փորագրել, լուսնաց ու զգեստներ ձեւել ու կարել, և այլն, ստանալով մի և նոյն ժամանակ ընդհանուր տարրական ուսում:

Իսկ մենք, ընդհակառակն, այնպիսի ուղղութիւն ենք տուել մեր իրական դպրոցներին, որ կարծես թէ այդ դպրոցներում ընդունվող բոլոր աղջիկները՝ արիւստօկրատների, ազնուականների, կամ շատ ունեւոր ծնողների զաւակներ լինելին: Մեր դպրոցներին ղեկավարողները ամենին մտաւցել են որ մեր դպրոցների անուհիներին մեծ մասը չբաւար ընտանիքների զաւակներ են, որոնց պէտք է պատրաստել ոչ թէ սալօններ, պարահանքի համար, առօրեայ ծանր կեանքի աշխատութեան համար:

Երեւի մեր մանկավարժները կարծել են որ մեր իրական դպրոցների աւարտողները բոլորն էլ կամ անմիջապէս մարդու կերթան, կամ բոլորն էլ վարժուհիներ կը դառնան, կամ միջոց կունենան շարունակել իրանց ուսումը բարձրագոյն այլ և այլ դպրոցներում:

Թէ ինչ պէտք է անենք այն բազմաթիւ և խղճալու արժանի անաշտօղակ օրիորդներին հետ, որոնք մեր դպրոցներից անպէտք վկայականներ ստանալով՝ տարալուծված և յուսահատված փողոցի մէջտեղ են մնացել, անօգնական կերպով շարունակել են կեանքի մէջ մեր մանկավարժների ձեռքով,—այդ մասին կը խօսենք հետեւեալ անգամ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ԴՊՐՈՑ

«Մշակ» 108 համարում «Փոքրերը հետևում են մեծերին» վերնագրով առաջնորդող մէջ շօշափելի կերպով մասնաճիւղ է արած մեր ծնողների անընդունակութեան և անհոգութեան վրա՝ դէպի որդոց կրթութեան վտանգ գործը: Անուրանալի ճշմարտութիւն է, որ նոր սերնդի մտաւոր և բա-

րոյական, մինչև իսկ ֆիզիկական կազմակերպութիւնը հիմնվում է ծնողաց, կամ աւելի լայն մտքով, ընտանիքի կազմակերպութեան վրա: Մանկական նուր հասակում ստացած բոլոր տեսակ տպաւորութիւնները, որոնք, ինչպէս յայտնի է, իրանց ազդեցութիւնը պահպանում են մարդու կեանքի ամբողջ ընթացքում, անմիջապէս բղխում են երեխայի շրջապատող հանգամանքներից: Իսկ այդ հանգամանքները ստեղծում են գլխաւորապէս մայրը, հայրը և ընտանիքի մէջ ուրիշ երկրորդական դեր կատարող անդամները: Ընտանիքի դերը շատ մեծ է. նա է այն ձուլարանը, որտեղ ձուլվում է երեխան: Ընտանիքի դերը երկու տեսակ կարող է լինել՝ որդոց կրթութեան գործում.—նա կարող է լինել կրթող, բառի իսկական և դրական նշանակութեամբ, նա կարող է լինել և պատճառ այն վնասակար և սխալ մտքերի, որոնք մտնելով երեխայի մէջ, դուրս կը բերեն նրանից ապագայում վատ մարդ, անշնորհ ընկեր և հասարակութեան անօգտակար անդամ: Որքան ընտանիքը կրթող է լու կազմակերպված ժամանակ, այսինքն, երբ մայրը և հայրը օրինակելի և հասկացող են, այնքան էլ ընտանիքը վնասում է նոր սերնդի կանոնաւոր դարգացման գործին, երբ այդ ընտանիքի անդամները ներկայացնում են մի շարք վնասակար ուղղութիւններ: Հայ ընտանիքը, ճշմարիտ է, պարունակում է իր մէջ քանի մի բարոյական, գնահատելի սկզբունքներ, բայց նոյն ընտանիքը, խորին սոցիալական շնորհով, պատմական հանգամանքների ազդեցութեան տակ, ներշնչում է որդոց մէջ այնպիսի հասկացողութիւններ, որոնք թուլացնում են, համարեա ոչնչացնում են մասաւոր սերնդի կանոնաւոր դարգացման գործը: Այդ տխուր դերերից ամենամեծը, խոտովաւնվեց մենք կանայքս, ընկնում է «հայ մօր վրա»: Պատկանելով իրական սեռին, և իմ դիրքով ծանօթ լինելով փոքր ի շատ հայ կանանց դուրսութեանը և մեր մայրերի ուղղութեանը, թող եմ տալիս ինձ, այս անգամ, կանգ առնել գլխաւորապէս այն դերի վրա, որը կատարում է հայ կինը, հայ մայրը՝ զաւակների կրթութեան գործում: Մեր մայրերը տղան ևս և այս դառն խօսքերը սովորաբար կրկնում են մեր բոլոր այն շրջաններում, որոնք ընդունակ են ընկալանալ լուր և նայելու մեր կեանքի վրա: Թէ գիւղացի հայ կինը, թէ քաղաքացի հայ կինը, թէ նոյն իսկ նոքա, որոնք արդէն կրում են շէկ ապա, շէկ ֆի և կ օր ս է տ, ամենքն էլ ընդհանրապէս կազմում են մի այնպիսի միջնորդ, որի մէջ ճաճ հայ

եղադնում, ամբողջ տաւարը, մի քանի հարկեր, երեքմի մի քանի հազար գլխից բաղկացած, յանձնվում է մի տաւարապահի—չղաքին, որ ունի մէկ կամ երկու օգնական՝ Հովութի օգնականներին վարձում են երեքմի տաւարի տէրերը, երեքմի էլ իրանց չղաքները: Հորթներն ու աւանակներն առանձին են արածում, հովութի օգնականի հսկողութեան ներքոյ և ամեն մի չղաք վարձվելիս այդպիսի մի պայման է դնում,—մի սովորութիւն, որով չափվում է գաւառում չղաքին ինքնասիրութիւնը և այն նշանակութիւնը և կարծիքը, որ ունի անասնապահ իր մասին: Մեզ պատահել է տեսնել չղաքներ, գլխաւորապէս լեռներում, որոնք մի ամբողջ դար շարունակ հովութիւն են արել: Այդ տեսակ անասնապահները մեծ կշիռ ունեն իրանց երկրում և նոցա անձնաւորութիւնը, որպէս ընտելեան ազատ որդի, յարգելի ու պատկառելի է շինական հասարակութեան մէջ: Հօվութիները իրանց պաշտօնը վարում են, ինչպէս ասեցինք, զարման սկզբից մինչև առաջին ձիւնը, իսկ նոցա օգնականները մի ամսով առաջ են թողնում իրանց պարտաւորութիւնը: Անասնապահները ստանում են ամբողջ սեղօնի համար աւան մի տաւարից մէկ չափի ցորեն ու գարի և ամեն երեկոյ ամեն տնից մի մի լաւաչ հաց: Մի քանի տեղերում բացի այդ հովութի ստանում է տաւարադրից մի մի գլուխ պանիր, մի փոքր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՍԻԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Շատ անգամ պետական արտատեղիները կապաւում են տրվում և կապաւառումները լինում են մեծ գաւառական յայտնի վաճառուները (купцы), որոնք տասնապատկելով իրանց տուած վճարը, տալիս են արտատեղիները գիւղացիներին: Վերջին տեղեկութիւնների համաձայն, ամբողջ Անդրկովկասը ունի 1,900,000 խոշոր տաւար, 5,000,000 ոչխար և 770,000 ձի: Որպէս խաշնարած երկիր, տաւարի քանակութեան վերաբերութեամբ, Անդրկովկասը արեւմտեան Եւրոպայի հետ համեմատելով, Գերմանիայի և Եվրոպայի հետ միասին, չորրորդ տեղն է բռնում: Ձիաների թուի կողմից—Երկրորդ տեղը, յիշարի քանակութեան համեմատ, Գանիայի հետ միասին, առաջին տեղը: Մենք մասամբ պէտք է ուրախ լինենք, որ գոնէ անտեսական խնդիրներին զաւով, որպէս խաշնարածութիւնն է, մենք կարողանում ենք մեզ համեմատել արեւմտեան հետ և, իբրեւ խաշնարած երկիր (տաւարի քանակութեան վերաբերութեամբ)

առաջին տեղերից մէկը բռնել: Եթէ խաշնարածութեան իր այժմեան նահապետական դրութեան մէջ մեր երկիրը կարողանում է տաւարի այդպիսի մի պատկառելի թիւ ցոյց տալ, երբ ամեն մի փոքր տաւարի հիւանդութիւն հնձում է երկրի տաւարը, ուրեմն ինչ դրութեան մէջ կը լինի մեր խաշնարածութիւնը, եթէ ընդունվի մեզ մօտ տաւարի լու տեսակների առաջացնել, տաւարի տարաբնուի իհրանդութիւնների առաջն առնելը և այլն *):

Յայտնվում է այսօր գաւառի մէջ անասունների մի որ և է հիւանդութիւն և մեր գիւղացին, որ միշտ հակված է ամեն բան բացատրել արտաքին կարգի ոյժերի ազդեցութիւնով, այդ դէպքում ևս, հաւատացած լինելով որ դա մի պատիժ է, որով նախախնամութիւնը պատժում է նրան իր երևակայական յանցանքի համար,—անտարբեր նայում է, ինչպէս նրա վերջին եղբ սատկում է, ասելով —«Իր կամքն էր, տուեց ու տարաւ...»:

Մեզ շատ անգամ պատահում է կարդալ լրագիրներում, որ ամենահասարակ տաւարի հիւանդութիւն, որ արեւմուտքում մի ակնթարթում արմատախիլ է լինում, մեզ մօտ ահալին վնաս է պատճառում երկրին, ամենակարճ ժամանակամի-

*) 1884 թականին Բօրչալու գաւառում 89 հազար ոչխար և 84 հազար գառ կոտորվեց, որոնց արժէքը հասնում էր 300 հազար ռուբլու:

